ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« ------» --------- 2016թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սարյա Եսայանի դիմումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ և 23-րդ կետերով և 2-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Հավանություն տալ Սարյա Եսայանի՝ «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) սեփականության իրավունքով պատկանող Երևանի Հ.Ներսիսյան փողոցի հ.7/1 հասցեում գտնվող շենքը (վկայական՝ 09.02.2015թ. հ.09022015) առնվազն 110.000.000 (հարյուր տաս միլիոն) ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների ներգրավմամբ կամ համարժեք աշխատանքների կազմակերպման միջոցով վերակառուցելու և բարեկարգելու նպատակով նվիրաբերության պայմանագիր կնքելու առաջարկին:

2.Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Ընկերության և Սարյա Եսայանի հետ կնքել նվիրաբերության եռակողմ պայմանագիր՝ դրանում նախատեսելով հետևյալ հիմնական պայմանները.

1) Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Երևանի Հ.Ներսիսյան փողոցի հ.7/1 հասցեում գտնվող շենքը բացառապես որպես պոլիկլինիկա օգտագործելու,

2) Ընկերության բաժնետոմսերը չօտարելու.

3) Ընկերության բաժնետոմսերը չգրավադնելու կամ երրորդ անձանց իրավունքներով չծանրաբեռնելու, ինչպես նաև Ընկերության գույքի, այդ թվում՝ անշարժ գույքի օտարման, գրավադրման կամ երրորդ անձանց իրավունքներով այլ կերպ ծանրաբեռնելու, Ընկերության վերակազմակերպման և անվանափոխման մասին որոշումներ չընդունելու մասին:

3. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 2-րդ կետում նշված հարցերի վերաբերյալ որոշումները կարող են ընդունվել, իսկ սույն որոշման 1-ին կետում նշված շենքի վերակառուցման ավարտից հետո դրա արտաքին և ներքին տեսքի փոփոխությունները (ճարտարապետական և (կամ) դիզայներական) կարող են իրականացվել Սարյա Եսայանի կամ նրա իրավահաջորդների համաձայնության առկայության դեպքում:

4. Երևանի քաղաքապետին՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ և 84-րդ հոդվածների համապատասխան՝ ընդունել սույն որոշման կատարման համար անհրաժեշտ որոշումներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սարյա Եսայանը դիմել է Երևանի քաղաքապետին՝ առաջարկելով «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության մասնաշենքը իր կողմից ներդրված ֆինանսական միջոցներով վերակառուցելու և բարեկարգելու նպատակով կնքել նվիրաբերության պայմանագիր՝ պայմանով, որ ընկերության բաժնետոմսերը, ինչպես նաև գույքը, այդ թվում՝ շարժական, չօտարվեն այլ անձի, չգրավադրվեն և որևէ այլ կերպ չծանրաբեռնվեն երրորդ անձանց իրավունքներով: Նա հայտնել է նաև, որ վերակառուցման աշխատանքների արդյունքը, որպես նվիրատվություն, փոխանցվելու է Երևան համայնքին կամ Երևանի ենթակայության կազմակերությանը:

Երևանի Հ.Ներսիսյան փողոցի հ.7/1 հասցեում գտնվող վերոնշյալ պոլիկլինիկայի շենքը՝ 1509.7քմ մակերեսով և հողամասը՝ 2762.8քմ մակերեսով, սեփականության իրավունքով գրանցված է «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության անվամբ (վկայական՝ 09.02.2015թ. հ.09022015):

Հարկ է նշել, որ Երևան համայնքի ենթակայության վերոնշյալ պոլիկլինիկան կրում է Սարյա Եսայանի ամուսնու՝ ՀՀ վաստակավոր բժիշկ Կառլեն Եսայանի անունը, որը մեծ ավանդ է ներդրել առողջապահության համակարգում: Եսայան ամուսինները բազմաթիվ բարեգործություններ են իրականացրել ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախում:

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով Եսայան ամուսինների գործունեությունն ու նրանց կողմից կատարված աշխատանքները, կարևորելով Սարյա Եսայանի՝ ի հիշատակ ամուսնու, հերթական բարեգործություն իրականացնելու պատրաստակամությունը, Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Նվիրաբերության առաջարկին հավանություն տալու մասին» որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Նվիրաբերության առաջարկին հավանություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Նվիրաբերության առաջարկին հավանություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ